

Հայաստանի համայնքների միության Վարչության կին անդամների ընտրության ընթացակարգը

Կանոնադրությունը

15.1.3. Ինչպես նաև, Հանրապետական խորհրդի անդամները փակ, գաղտնի քվեարկությամբ, իրենց կազմից ընտրում են երկու կին համայնքի ղեկավարների՝ Վարչության կազմում ընդգրկվելու նպատակով:

1. Ընտրության կազմակերպումը

Միության Վարչության կին անդամների ընտրական գործընթացի պատշաճ կազմակերպման համար պատասխանատու է Միության գործադիր տնօրենը¹:

2. Թեկնածությունների առաջադրման կարգը

- Միության Հանրապետական խորհրդի համապատասխան նիստի կազմակերպման վերաբերյալ անդամներին նախօրոք ուղարկված ծանուցման մեջ հստակ պետք է նշվի նաև Հանրապետական խորհրդի նիստի ժամանակ նախատեսվող՝ Միության Վարչության կազմում կին անդամների ընտրության և ընտրության կազմակերպման կարգի մասին տեղեկատվություն:
- (1) Միության անդամների Ընդհանուր ժողովին հաջորդող նորընտիր հանրապետական խորհրդի առաջին նիստի ժամանակ և (2) հանրապետական խորհրդի այն նիստի ժամանակ, որն ամենամոտն է ՀԽ-ի գործունեության 2.5 տարին լրանալուն (այդ ժամկետը լրանալուց առաջ), Հանրապետական խորհրդի նիստի նախագահողը
 - տեղեկացնում է ՀԽ անդամներին, որ ՀԽ այդ նիստի ընթացքում նախատեսվող Վարչության ընտրությունից անմիջապես հետո կազմակերպվելու է նաև Վարչության կին անդամների ընտրություն,
 - բարձրաձայն կարդում է Վարչության կազմում կին անդամների ընտրության վերաբերյալ Միության կանոնադրության համապատասխան դրույթը,
 - տեղեկացնում է ՀԽ նիստին մասնակցող համայնքի ղեկավարներին, որ ՀԽ անդամ կին համայնքի ղեկավարները կարող են ինքնաառաջադրվել կամ առաջադրվել ՀԽ-ի մյուս անդամ համայնքների ղեկավարների կողմից,
 - նիստին մասնակցող համայնքների ղեկավարներին առաջարկում է ՀԽ կին անդամների շարքից առաջադրել թեկնածուներ՝ Վարչության կազմում ընտրվելու համար (Վարչության գործունեության համար սահմանված ժամանակահատվածում - 2.5 տարի),
 - գրի է առնում բանավոր հնչեցված առաջադրումները (առաջադրված թեկնածուների անուն ազգանունը, համայնքի և մարզի անվանումը):

3. Ընտրությունների կազմակերպումը

- Այն բանից հետո, երբ նիստի նախագահը գրի է առնում բոլոր կին թեկնածուների անունները, հայտարարվում է ընդմիջում: Ընդմիջման ժամանակ Միության աշխատակազմը կազմում է մեկ քվեաթերթիկ՝ բոլոր առաջադրված կին թեկնածուների անուններով:
- Եթե առաջադրվում են միայն 2 համայնքի կին ղեկավարներ, ապա առաջադրված թեկնածուն(ները) համարվում են ընտրված:
- Եթե առաջադրված թեկնածուների թիվը գերազանցում է 2-ը, ապա ընտրությունը կազմակերպվում է փակ, գաղտնի քվեարկությամբ: Հանրապետական խորհրդի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի մասնակցել Վարչության կազմում համայնքի կին ղեկավարների ընտրության գործընթացին և կարող է իր ձայնը տալ միայն 1 թեկնածուի օգտին: Բոլոր քվեարկող անդամների քվեները հավասարազոր են:
- Քվեարկության վայրը և ժամը հայտարարվում է ՀԽ նիստի նախագահողի կողմից: Քվեարկությունից առաջ ՀԽ յուրաքանչյուր անդամ համայնքի ղեկավարի աշխատակազմի

¹ Եթե գործադիր տնօրենն այս գործընթացին առնչվող հնարավոր ֆինանսական կամ անձնակազմի շահ ունի, ապա պետք է նախօրոք հայտնի այդ մասին, և Վարչությունը պետք է պատվիրակի ընտրության կազմակերպման գործառույթը որևէ անկախ անձի:

կողմից տրվում է առաջադրված բոլոր կին թեկնածուների և նրանց ներկայացրած համայնքների անունները պարունակող մեկ քվեաթերթիկ: Քվեաթերթիկ ստացած յուրաքանչյուր անդամ պետք է ստորագրի իր անվան դիմաց և քվեաթերթիկը գցի համապատասխան քվեատուփի մեջ: Անդամներին տրվող քվեաթերթիկների թիվը պետք է արձանագրվի և քվերակության ավարտին համեմատվի քվերակությանը մասնակցած անդամների թվի հետ:

- Քվեարկության արդյունքները հաշվում և ամփոփում է գործադիր տնօրենի կողմից նշանակված փորձառու, անկախ երեք անձանցից բաղկացած ընտրական հանձնաժողովը: Յուրաքանչյուր թեկնածու, ինչպես նաև գործադիր տնօրենը, կարող է ունենալ քվերակության ընթացքին և քվեաթերթերի հաշվման գործընթացին հետևող դիտորդ:
- Կին թեկնածուների ընտրության արդյունքները ամփոփվում են Կանոնադրության հոդված 15.1.2-ով նախատեսված Վարչության հիմնական կազմի ընտրության արդյունքների ամփոփումից հետո:
- Ամենաշատ ձայները ստացած երկու թեկնածուները համարվում են ընտրված:
- Ընտրական հանձնաժողովը ընտրության արդյունքների մասին տեղեկացնում է գործադիր տնօրենին: Գործադիր տնօրենը ընտրության արդյունքների հիման վրա կազմում է Վարչության նորընտիր անդամների ցուցակ՝ նշելով անդամների անուն ազգանունը, համայնքի անվանումը, համայնքի տեսակը (քաղաքային/գյուղական): ՀԽ նիստի նախագահողն այնուհետև ամփոփում է ընտրությունների արդյունքները՝ կարդալով Միության Վարչության կազմում ընտրված երկու համայնքների կին ղեկավարների անունները:
- Այն դեպքում, երբ երկու կամ ավելի թեկնածուներ ստանում են հավասար քանակությամբ քվեներ, ընտրական հանձնաժողովը գրում է այդ թեկնածուների անունները հավասար չափի թղթերի վրա, դնում տուփի մեջ և փոխանցում այն նիստի նախագահողին: Վերջինս պետք է առանց նայելու վերցնի թղթերից մեկը և հայտարարի դրա վրա գրված թեկնածուի անունը որպես վարչության անդամ: